



250 B

# ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N. Y. 10016 • 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թիւ 28924  
Մարտ 6, 1973

Արժանաշնորհ  
Տ. Արսէն Բհնյ. Պարսամեան  
Հովիւ Ս. Յակոբ Եկեղեցւոյ  
Նախագահ Ժիական Խորհուրդի  
Խիչմբնտ.

Սիրելի Տէր Արսէն,

Ստացած ենք 1973 Փետրուար 28 թուակիր 2եր տեղեկագիրը, որով կը  
հաղորդէք թէ 2եր նախագահութեամբ Փետրուար 4ին զուարուած համայն-  
քիդ Ժիական Ժողովին մէջ կատարուած է Ժիական Խորհուրդի հինգ անդա-  
մոց ընտրութիւնը միաձայնութեամբ եւ ոչ թէ քուէարկութեամբ:

Թեմական Կանոնադրութեան համաձայն (տես 17, 25 եւ 27 յօդուածնե-  
րը) քուէարկութեամբ կը կատարուին ընտրութիւնները: Այս կարեւոր  
պարագան 2եր լուրջ ուշադրութեան յանձնելով, այս անգամ բացառաբար  
կը վաւերացնենք Ժիական Խորհուրդի նոր անդամները, ըստ ստորեւ  
տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան ղրկել Ժիական Խորհուրդի նորընտիր  
Դիւանի անդամոց, նորընտիր պատգամաւորի (տալով Տիկին Պարոնեանի  
միշտ անունը) եւ Եկեղեցւոյդ ենթակայ մարմիններու վարչութեանց  
ատենապետներու անունը, հասցէն եւ հեռաձայնի թիւը:

Օրհնելով Ժիական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք 2եզի եւ 2եր  
պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի  
պայճառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր  
սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Ժան Աշճեան  
Պարզել Պարոնեան  
Նուպար Պօյաճեան  
Խաչիկ Տէտէեան  
Բոպերթ Մակարեան